Հավելված N 397
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսական նորարարությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 23-32.5-Մ2-43)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների, գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքները,
2. իրականացնում է գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքները,
3. իրականացնում է գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքներ՝ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով:

Իրավունքները՝

- ստանալ համապատասխան նյութեր և տեղեկատվություն գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների, տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղատնտեսական

խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների վերաբերյալ,

- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ աշխատանքների վերաբերյալ,
- ստանալ առաջարկություններ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների միջոցով գյուղատնտեսական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման, գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունն ապահովելու վերաբերյալ,
- մասնակցել Բաժնի իրավասության ներքո գտնվող հարցերի շուրջ կազմակերպվող, պետական կառավարման մարմինների համապատասխան մասնագետների, այլ փորձագետների մասնակցությամբ խորհրդակցություններին, ընդգրկվել աշխատանքային խմբերում:

Պարտականությունները՝

- ամփոփել տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների, գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ նորարարությունների տեղայնացման նպատակով ստացված տեղեկատվությունը, կազմել համապատասխան փաստաթղթեր, կատարել վերապատրաստումների, կադրերի և տեղեկատվության փոխանակման ուղղությամբ, ինչպես նաև հաջողված փորձի վերաբերյալ խորհրդատվական զանգվածային տարածման աշխատանքներ,
- ստուգել գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների հետ գիտության բնագավառում համագործակցության շրջանակներում ստացված առաջարկությունները, կատարել համագործակցության ընդլայնման նպատակով ուսումնասիրություններ, ամփոփել արդյունքներն ու ներկայացնել համապատասխան տեղեկատվություն,
- հավաքագրել գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով գիտական աշխատանքների և նորարարությունների տեղայնացման ուղղությամբ ստացված տեղեկատվությունը, համադրել արդյունքներն ու ներկայացնել առաջարկություններ դրանց իրականացման վերաբերյալ, տնտեսավարողներին ծանոթացնել համաշխարհային շուկայում առկա նորարական լուծումներին,
- վերլուծել և քննարկել գյուղացիական փոքր տնտեսությունների համար փորձացուցադրական տարածքներում նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու, գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը ձևավորելու նպատակով ստացված առաջարկությունները, նախապատրաստել համապատասխան խորհրդատվական միջոցառումներ գյուղացիական փոքր տնտեսությունների համար,
- նախապատրաստել Բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: